



# ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

## Հ Ր Ա Մ Ա Ն

«27» հունիսի 2017 թ.

ք. Ստեփանակերտ

N 292/16

### ***Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն դաստիարակ» և «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթների հաղթողներին պարգևատրելու մասին***

Ելնելով ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության հանրապետական մրցույթային հանձնաժողովի եզրակացությունից՝ ***հրամայում եմ***.

**1. «Տարվա լավագույն տնօրեն»** մրցույթի հաղթող ճանաչել Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի տնօրեն Լյուդմիլա Անդրանիկի Հովհաննիսյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **320 հազար** դրամ գումարով:

- «Ուսումնադաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածքի համար» անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի Շոշի Ս. Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Հանլետ Շահենի Հարությունյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

- «Ուսուցման կաբինետային համակարգին անցնելու համար» անվանակարգում հաղթող ճանաչել Հաղրութի շրջանի Ակնաղբյուրի Վ. Ամիրջանյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն Լիրա Ասատուրի Ասրյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

**2. «Տարվա լավագույն ուսուցիչ»** մրցույթի արդյունքներով՝ հաղթող ճանաչել Ստեփանակերտի Մ. Մաշտոցի անվան հ. 4 հիմնական դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Նորա Միքայելի Թամրազյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **300 հազար** դրամ գումարով:

-«Առարկայի իմացության մակարդակը և նյութը մատուցելու վարպետությունը» անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի Է. Բարսեղյանի անվան միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Շուշան Սերգեյի Մինասյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **165 հազար** դրամ գումարով:

-«Աշակերտների մոտ առարկայի նկատմամբ հետաքրքրություններ գարգացնելու կարողությունը» անվանակարգում հաղթող ճանաչել Շուշիի Խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցի անգլերենի ուսուցչուհի Սաիդա Ալբերտի Հայրապետյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **165 հազար** դրամ գումարով:


**3. «Տարվա լավագույն զինղեկ» մրցույթի արդյունքներով** հաղթող ճանաչել Մարտունու Ն. Ստեփանյանի անվան հ. 1 միջնակարգ դպրոցի զինղեկ Արամ Արսենի Խաչատրյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

-«Ուսումնանյութական բազայի հարստացման և նորարարության համար» անվանակարգում հաղթող ճանաչել Ասկերանի շրջանի Խնապատի Ա. Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի զինղեկ Արման Աբուլֆաթի Ավանեսյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **105 հազար** դրամ գումարով:

**4. «Տարվա լավագույն դաստիարակ» մրցույթի արդյունքներով** հաղթող ճանաչել Ստեփանակերտի հ. 3 պետական մանկապարտեզի դաստիարակ Լարիսա Վլադիմիրի Ասրյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **175 հազար** դրամ գումարով:

-«Սիրտս նվիրում եմ երեխաներին» անվանակարգում հաղթող ճանաչել Մարտունու հ. 1 պետական մանկապարտեզի դաստիարակ Ալինա Արամի Հայրապետյանին և պարգևատրել նախարարության պատվոգրով ու **105 հազար** դրամ գումարով:

**5. Պարգևատրումները կատարել հանդիսավոր կերպով Ուսուցչի օրը՝ հոկտեմբերի 5-ին:**



**Ս.ԱՍՄՅԱՆ**